

Ոլլատիկան ողբերգութեանս և Թուղթ ի  
հոյակուպ ուխտն կճավայ, զասն կարծեացն  
անիմելոց թօնրակեաց Յանէսի և Յամրէսի ։  
Բացի սրանցից Նարեկացուն վերապրուել  
են նաև մի քանի բանաստեղծական այլ  
գործեր, զաւանաբանական ձառներ և մեկ-  
նաբանական գրուած քներ, որոնք բանաօի-  
րութեան կողմից իրաւացիորէն համարուել  
են հեղինակին անհարազատ, որովհետե  
զրանց գրութեան ոճը բոլորովին նման չէ  
Նարեկացու ոճին և զրանց Նարեկացունը  
լինելու մասին ոչ մի լիշտառակութիւն չկայ  
ոչ նրա կենսագրականներում և ոչ պատ-  
մագիրների գործերում։

Ե՞րբուանից է սկսում և ո՞քան է տեղ  
Նարեկացու ստեղծագործական կեանքը՝  
Եթէ նկատի առնենք, որ բանաստեղծի  
մեզ հասած գործերից (յլշատակարաննե-  
րում նշուած թուականներին նայելով) ա-  
ռաջինը «Երգ Երգոցի» մեկնութիւնն է,  
գրուած քսանգեց տարեկան հասակում՝  
977 թուին, իսկ վերջինը «Աղբերգութեան  
մատեաննա» է, գրուած 1002 թուին, ապա  
կը ստացուի, որ նրա գրական ստեղծագոր-  
ծական կեանքը տեղ է մօտաւորապէս  
քսաննինց տարի: Նա իրեւ զրոյ և բանաս-  
տեղծ հետզհետէ աճել է և վախճանուել  
իր ուժերի ծագման գագաթնակետին:

Նարեկացու զբական հռչակը սկսել է  
նրա կենանութեան օրով, և ժամանակի  
ընթացքում հետզետէ մեծացել է: Մեր  
պատմիչները յաճախ են նրա մասին խօսել՝  
արտայատելով իրենց սէրն ու հիացմունքը:  
Այսպէս՝ Սամուել Անեցին, Ամրատ Բ.-ի  
թագւորութեան տարիների կարեոր եղի-  
լութիւնների մասին պատմելով, զբել է.  
Եթաւուրս յայսոսիկ փայլէր իրեն զարհ-  
գակն խմասութեամբ . . . Պրիզոր Նարե-  
կացին՝ որ ի Հայք ի գաւառն Վասպուրա-  
կան՝ որդի Տեհան Խորովու՝ Անձեւ ացեաց  
և պիսկոպոսին Յ<sup>շ</sup>) :

W. W. Gilligan

(Gurmukhi, 2)

## ԵՐԱԺԾՎԱԳԻՏԱԿԱՆ

ՄԻԶԱԿԱՐԵԱՆ

ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ

24.

ԵՐԱԺԻՇՏ ՄԱԿԱԲԵԼ,

Ակների պատմական վանքի հպարտութիւնն է կազմում մի լաւագոյն արուեստագետ, որ գեռ 13րդ դարում, մենաստանի կամարների ներքոյ զարկ է տալիս հայ երաժշտական արուեստին։ Դա իր դարաշրջանում սիրուած ու յարգուած օիմաստուն արուեստագետ Մանուկըն է, որ իր ժամանակի վաստակաւոր երաժշտագետների շարքում ունի իր ուրբոյն էջը։ Նա իր գեղարվեստական գործունեութեամբ Ակների մենաստանի միաբանների և իր միջավայրի երաժշտասէրների հոգիների վրայ խոր և անմտանալի տպաւորութիւն է թողնում։ Թերեւու այդ երեւոյթով էլ պիտի բացատրել, որ գեռ 1333 թուրին Ակների վաստակաւոր զրիշ Արագիս կրօնաւորը, նրա յիշատակը վառ պահելու համար, գրում է մի և երգաբանու։ Ահա զրչի վկայութիւնը . . . . Գրնցաւ երգաբանու ի թվ։ Հայոց ԶԶԲ (1333) ձեռամբ անարհեստ զրչի Արգիս . . . կրօնաւորի . . . ի յիշատակ շնորհալի քահանակի Անոնքի»։

Այս վաստակաւոր երաժիշտն իր լաւագոյնը նույիրում է նաև հայ զրչական արուեստի զարգացման գործին։ Նա է, որ Արքայակազմինում Պօղոս կրօնաւորի զրչով զրուած աթէովվիլոսի ներբողեանց յունաբէնից թարգմանուած ճառի ձեռագիրը, իր ուսերի վրայ զրած, բերում է այերկնանման սուրբ և աստուածաբնակ անապատն ի յլկներն, առ լուսազգիստ սուրբ և երջանիկ հայրն Ստեփանոս։ Ահա յիշատակարանի տողերը. «...Եւ ես լսու իմում կարի, — զրում է Պօղոս զրիչը, — զրեցի և առաքեցի։ Եւ աղերսալի պաշտամանաւք աղաչեմ ո՛վ սրովքը էանման դասք լուսերամից, յիշեսջիք աղաւեթիւք զատուածապատկանի հայրն զլատեանոս, զառաջնորդ սուրբ ուխտիս Ականց անապատին։ Ա

<sup>1)</sup> Սամուել Անեցի, Հաւաքմունքի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 103.

զծնաւղան իւր և գիմաստուն երաժիշտն զՄանուէլ՝ որ ուսով իւրով բերաւզ (բերող) եղե ճառիս ի վանս: Եւ զաշխատաւղ զրիչս զՊաւզոս և ծնաւղան մեր և զամենայն ի Քրիստոս հաւատացեալու: Խոկ Գառ բերգին Ա. Կաթողիկոսի և Յիշատակարանք ձեռագրաց զրքի 1177րդ էջում կարդում ենք հետեւեալ սեղմ տողը. «Մանուէլ երաժիշտ, ԺՓ. դար, 1273: Ակներում»:

Աւշագրաւ է և այն, որ Մանուէլը գրչութեան մատեանի կազմարարութեան խնդրում ևս բերում է իր աջակցութիւնը: Այդ հանգամանքը հաստատում են Պօղոս գրչի ձեռքով ընդօրինակուած ձեռագրի յիշատակարանի հետեւեալ տողերը. «Ով մանգունք եկեղեցոյ և որդիք վերին սիոնի, յորժամ ընթեռնոյք զգիրս զայս զտառապեալու ի բարեաց զՄանուէլ յիշեսջիք, զի սակաւ մի և մեք աշխատեցաք ի կազմած գրոյս»:

Մանուէլի կեանքի պատմութեան մասին, գժբախտաբար, չկան այլ տեղեկութիւններ: Յայտնի է միայն այն, որ նա ապրել է և ստեղծագործել 13րդ դարում և օժտուած լինելով զեղարուեստական ձիրքով՝ իր ապրած դարաշըջանի երաժշտական և գրչական արուեստների զարգացման գծով որոշ դեր է կատարել:

\* \* \*

Միջնադարի հայ երաժշտական արուեստի պատմութեան էջերն արձանագրելիս նշենք նաև Մշոյ պատմական և Առաքելոց զվանքում փայլող երաժիշտների անունները ևս, որոնք ժամանակի, 13րդ դարի, հայ արուեստագէտների շարքում ունին իշենց համեստ էջը: Քրանցից յայտնի են՝ Յուսիկ, Ռոստագէս, Աւետիս, Մտեփանոս և Ներսէս երաժիշտները, որոնց անունները զրոշմուած են 1204 թուին, Կարնեցի Վարդան քահանայ զրչի ձեռքով և Առաքելոց զվանքում գրուած «Տաւնական» ձեռագրի յիշատակարսնում: Այս վաստակաւոր երաժիշտները հայ եկեղեցական երաժշտութեան արուեստի զարգացման գծով կատարած դերի մասին, գժբախտաբար, փաստացի տեղեկութիւններ չունենք: Նրանց կեանքից յայտնի է միայն այն, որ նրանք եղել են և Առաքելոց զվանքի միարաններ, պատմական մենաստանում զբաղուել են

երաժշտական արուեստով, իսկ 1204 թուականին գրուած «Տաւնական» մատեանը գնելու համար նուիրատուներ են հանդիսացել, երեւոյթներ, որոնք ընդգծում են նրանց գրասէր, լուսաւոր, առաջադէմ և այլ զեղեցիկ յատկանիչների մասին:

15րդ դԱՐ

25.

### ԵՐԱԺԴՏԱՄԵՏ Ա. Ա. ՃՐԱՑՅԱՆ Պահանջ

15րդ դարի երաժշտական արուեստի պատմութեան մէջ ցոլանում է տաղանդաւոր երաժշտապետ Վահրամ քահանայի պայծառ կերպարը: Որ իր զեղարուեստական գործունէութեամբ միջնադարի հայ երաժշտութեան վարպետների շարքում առանձայտուեկ տեղ է զբաւում:

Հայ երաժշտութեան պատմութեան դեռ անձանօթ այս վաստակաւոր երաժշտապետի կեանքի հիմնական էջերը պատկերելու համար տեղեկութիւններ, գժբախտաբար, շատ քիչ ունենք: Այդ տեսակէտից մի թանգիին աղքիր է 15րդ դարում գրուած մի ձեռագիր: Դա 14-15րդ դարերի նշանաւոր մատենագիր, եկեղեցական գործիչ և Հայաստանի ամենանշանաւոր ուսումնական հաստատութեան՝ Տաթեւի համալսարանի, զեկավար Գրիգոր Տաթեւացու<sup>(\*)</sup> և Գիրք հարցմանց խորագրով զրչագիրն է, որի յիշատակարանում վաստակաւոր արուեստագէտ Վահրամի մասին արձանագրուած են կենսագրական սեղմ ակնարկներ, որոնք մասամբ պարզում են նրա կեանքի մի քանի հիմնական էջերը: Զեղ ցայտուն զա-

(\*) Գրիգոր Տաթեւացին հռչակաւոր Տաթեւի համալսարանի գլխաւոր սիւներից մէկն է: Դեռ նրա զեկավարութեան ըրջանում համալսարանը փայլել է երեք ուսումնական բաժիններով՝ նկարչական, զրչական և երաժշտական: Մի ուսումնարանուն Տաթեւացին ուսուցչանէր զնախիկին երգիչ վարդապետաց զերաժշտութիւն քաղցրական ձայնի եղանակաւ, մինչեւ անգամ յամենայն երկրէ և ի քաղաքաց եկեալ պարապէին առ սաս նորա: Եւ ի միումն՝ նկարագրութիւն պատկերահանութեան եւ զանազան նկարչութիւններ: Եւ ի միումն զներքին և զարտագին զերեանս»:

Տաթեւացին հարստացրել է նաև դարաշըջանի հայ մատենագրութեան էջերը: Դեռ 1405 թուին նա հայ զբականութեան նուիրել է «Մեկնութիւն

զավար են տալիս նախ նրա երաժշտական  
պատրաստութեան մասին։ Նա մէկն է 15րդ  
դարի ա՛յն պայծառ զէմքերից, որ խորա-  
պէս հասկացել է, թէ հոգեօրականը պէտք  
է ոչ միայն ընդհանուր զարգացում ունե-  
նայ, այլև երաժշտական կրթութիւն։ Բն-  
բաննել է և այն, որ ժամերգութիւնն ան-  
թերի և ճիշտ կանոններով կատարելու հա-  
մար անհրաժեշտ է ծանօթանալ մանրուս-  
մունքների, զանձերի և շարտկանների է-  
ռութեան հետ։ Այդ զիտակցութեամբ էլ նա  
խորապէս ուսումնասիրել է երաժշտական  
արուեստը և նրա գեղեցկութիւններն ու  
նրբութիւնները։

թէ երաժշտապետը կիլիկիայի սր վանքում և սր տաղանդաւոր երաժշտագէտի մօտ ստացել է իր երաժշտական կրթութիւնը, յիշատակարանում, զժբախտաբար, փաստական տուեալներ չկան: Պարզ է միայն այն, որ նա իր գարաջը ճանում փայլել է իր երաժշտական հմտութեամբ և գարգապետութեամբ: Դրա ցայտուն ապացոյցն այն է, որ նրա անունը ժօղովրդի մէջ հրաշակուել է որպէս սերաժշտապետ պահծալիու: Իր գեղարուենատական տաղանդով էլ

Սազմուաց է, իսկ 1407 թուին՝ «Քարոզզիրք ըլլին ի ույն թուականին նրան տեսնուամ ենք Սիւնեաց աթոսի վրայ, որպէս տեղապահ։ Նա կըթել և հայ ժողովրդին նաև իրի է բազմաթիւ աշակերտներ, որոնցից շատերն ընթացի են իրենց ուսուցչի գծած լուսաւոր ճանապարհով։ Նրա զբին են պատկանուած նաև Լուժմանք զժուարիմաց բանից ի մեկնութիւն զրոյն Յորայ» (1408 թ.), և լուժութեամբ Առիստակիսի Քէորզայ ի խրատ զըրշութեան է, «Քաղուածոյ մեկն Յօվհաննու աւտարանի և ուրիշներ»:

Երեւանի պետական Զեռազրատան գտնուող  
№ 6607 ձեռազրի լիշտակարանից երեւում է,  
որ Տաթևացին ծնուել է վրաց աշխարհում, «ի  
յամուրը թմոց» (Զաւախը գտառում): «Եւ էր  
մասնուկ գեղեցկատիպ և ուշիմ, և լի հոգոյն պար-  
գեւոք»: Աւսել է Նշանաւոր վարդապետ և «մեծ  
փիլիսոփայ» Յօհաննէս Որոտնեցու մօտ: Իր  
ուսուցիչը տարել է Նրան «ի Սիառու լեառն» և  
սարկաւագ ձեռնազրել, «յանուն Խուսաւորչի»  
կոչելով Գրիգոր Նրա մկրտութեան անունն եղել  
է Խութլուշահ: Երուսաղէմում ձեռնազրուել է  
Քահանայ, ապա՝ վարդապետ Նա եղել է «աղ-  
քատասէր և օտարասէր, առատ ի տուրս աղքա-  
տաց, խարազանազգեստ մարմնով և խոնարի-  
հոգուով և ծննդական մտօքն: Հասակաւ երկայն,  
զիմօք պայծառ, տեսակ արժանի զոռոզութեանն,  
և բարք խարսիեց, մուրուօք առատ, միշտ պահե-  
ցող»: Վախճանուել է 1409 թ. Դեկտ. 27ին:

Նա առանձին երանգ է տուել իրաժամանակի երաժշտական մշակոյթին։ Այս մասին 1421 թուականին զբուած «Փիրք հարցմանց խորագրով՝ ձեռագրի յիշատակարանում կարգում ենք հետևեալ բնորոշ առղեքը։ ԱՌՂՎ քահանայք սուրբ Ալիսնի և դասք ընթերցողաց, որք հանդիպիք սմայ, կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի Քիրատոս զարբանեալ և զարժանապատվեալ, ձագեալ ալեաւք ծերունին, զգահազլուխ քահանայն զտէք Վահրամն, որ էք երաժշտապետ պանձալի և փակտկալ սուրբ Լուսաւորչին Գրիգորի»։

Երեւանի պետ. ձեռագրատանը գտնուող «Քիբէ հարցմանց» ձեռնպրի յիշատակարանն ուրոյն արժէքը է նիկրկայացնում նաև նրանով, որ ընդգծում է երաժշտապետական հարամի մի այլ զեկեցիկ յատկութիւնը: Իր միջավայրի ժողովրդից նա սիրուել է ույարգուել ոչ միայն որպէս «պանծալի երաժշտապետ», այլև որպէս իր կոչման բարձրութեան կանգնած մի պարտաճանաչ հոգեօրական, որպէս «գահակլուխ» քահանայ, որ նուիրուել է հայ եկեղեցու պայծառութեանն ու բարեգարգութեանը: Դա այն չըջանն էր, եթե նա Կիլիկիայի պարփակութեանը կառաւագործուի պահակալին էր:

Մի այլ հանգամանք նոյնպէս արժէ քուուում է երաժշտապետ Վահրամ քահանացի կերպարը։ Դա նրա հոգում իշխող գրչական արուեստի սէրն է։ 1427 թուականին երաժշտապետը Կիլիկիայից ուժութիւն է գնացել Երուսաղէմ՝ Քրիստոսի զերեղմանը համբուրելու։ Այդ ժամանակ նա Երուսաղէմի միաբան կարապետ արեղայից գնել է Գրիգոր Տաթևացու 1407 թուականին գրած «Գրիգոր հարցմանց» ձեռագիրը և իր հետ բերել է Կիլիկիա։ Այս մասին ձեռագիրը յիշատակաբանում կարդում ենք ա . . . Քանզի յայսմ ամին, որ էր թվական հայոց Պէ (870 + 551 = 1421) ամ, գեացեալ յիշեռուսաղէմ յիշկրպագութիւն սուրբ տնաւորինականացն Քրիստոսի, և աւեսեազմատեանս աստուածային, ծաղկաւէտրութաստանս որպէս դրախտ վայելուս և զեղեցիկ, հաւաքեալ ի սմա ծաղիկս զանագանս, բերելով մեզ ճաշակս քաղցրահամես և ղեղս բժշկաբարս, և եռափափաք սիրոց գնեաց զսայ ի հաւալ արդեանց ի նոյն վերօյթեալ կարապետ արեղատէ, որ էր յայն

ժամ վակակալ և սպասաւոր սուրբ դամ-  
բարտի Յակոբայ առաքելոյն:

Երաժշտապետ Վահրամին իր միջավայ-  
րում յայտնի է զարձել նաև որպես լաւա-  
գոյն մանկավարժ: Նու կրթել է և դաս-  
միաբակել երաժշտասէր մի ամբողջ սե-  
րունդ և նրա հոգում վառ պահել հայ ե-  
կեղեցական և աշխարհիկ երաժշտութեան  
ուրը:

1421 թուականին գրուած Պիրք հարց-  
մանց ձեռագրի յիշատակարանն ու շագրաւ  
է նաև այն տեսակէտից, որ ցայտուն գոյ-  
ներով զծել է ընտանիքի տիպար և օրի-  
նակիլի հայր հանդիսացող երաժշտապետի  
ընտանեկան կեանքի պատկերը, ուր տես-  
նում էք վաստակաւոր քահանայի տիրու-  
րուհին՝ «բարիհամեստ» Եղները, նազելի  
դուստրը՝ տիկ. Մարիուն, փեսան՝ պարոն  
Թորոսը և սարամիտ, մաքուր և անբիծ»  
սարկաւոգ Հեթում որդին, որ 1421 թուա-  
կանին, 18 տարեկան հասակում, վախճան-  
ուել է: Նրա վաղաժամ մահը խոր վիշտ,  
կոկիծ և անփարատելիս տրտութիւն է  
պատճառել թէ՛ ծնողներին և թէ՛ բոլոր  
հարազատներին: Ահա յիշատակարանի վկա-  
յութիւնը, ալրդ, աղաչեմ զծեզ զամենեա-  
նան . . . յիշեցէք ի յերկնաթաիչ աղաւիժս  
ձեր զգերոյզքեալ քահանայն զվահամեն,  
և զրարիհամեստ զուգակիցն իւր զտիկին  
Եղներն, և զիւր նազելի գուստրն՝ տիկին  
Մարիունն, և զիեսայն իւր՝ զպարոն Թո-  
րոսն, և զաստուածապարզե զաւակեն իւր:  
Այլև զհանգուցեալ սիրուն որդեակն իւր-  
եանց, զսրամիտ, զմաքուր և զամբիծ  
սարկավաքն, որոյ անուն յօրջորջիւր Հե-  
թում, քանզի յայում ամի, որ է թվական  
հայոց 92 (870 + 551 = 1421) ամ, ի յու-  
նիս ամսոյ ԺԱ. (11) և պատկեր աւուրին  
չորիքշարթի, փոխեցաւ առ Քրիստոս յօրին  
ամենացուն և զնաց տարաժամ յաշխարհէս,

զի էր ամաց Ժ. և Բ. (18)ից և եթող մեծ  
ուուզ և անփարատելի տրտութիւն իւր  
ծնողացն և ամենայն զարմիցն, ևս առա-  
ւել մեզ, քանզի ի մանկութենէ ի վեր  
սնուցել էաք գորովալիր աղետիւք:

Թէ ո՞ր թուականին է վախճանուել  
վաստակաւոր երաժշտապետը և ո՞ր պատ-  
մական վանքի կամարների ներքոյ ին հանգ-  
չում նրա աճիւնները ստոյզ տեղեկութիւն-  
ներ չկան: Պարզ է միայն այն, որ նա

## ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

### ՍԻՐԱՀԱՑԵԱԸ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

**ՏԵՂԱԳՐԱԿԱՆՆ. —** Սիրահայեաց Ա.  
Աստուածածնի վանքը կը գտնուէր Զնքուչ  
կամ Եկեղեցու աւանին մօտ, Զերմուկ գա-  
ւառին մէջ (Դուկաս Վ.րդ. Խնձրձեան, Աշ-  
խարհագրութիւն, Ասիա, Հատոր Ա., Վե-  
նիամիկ, 1806, էջ 239): Կոկիկ և սիրուն  
չէնք մըն էր, այգիներով և ձառերով շըր-  
ջապատուած (Պ. Վ.րդ. Սրուանձտեանց,  
Թորոս Ազրար, Մասն Բ., Կ. Պոլիս, 1884,  
էջ 187):

**ՊԱՏՄԱԿԱՆՆ. —** Սիրահայեաց Ա. Աս-  
տուածածին վանքին հիմնարկութեան, ա-  
ռաջնորդներուն և անոնց գործունէութեան  
մասին կան հետեւեալ տեղեկութիւնները:

1. — Պօլոս Վ.րդ. Հասառանցի (1561-  
ֆ 1593). — Առ 1561ին Ա. Աստուածածնի  
վաղակառոյց մատրան կից ուխտ և սթոռ  
կը հաստատէ (Թ. Ազրար, Բ., էջ 457-8):

Այս ժամանակ Եկեղեցուի մէջ իրբն  
զրիչ և ծաղկող յիշատակելի է Գառպար  
Բահանան, որուն օրինակած զիրքերէն ծա-  
նօթ են 1. — Նարական, 1580 (Թ. Ազրար,  
Բ., էջ 384): 2. — Աւետարան, (նոյն, էջ  
453): 3. — Նարական, 1586 (Ծուցակ Զեռ.  
Էջմիածնի, 1863, Թիֆլիզ, թիւ 1587, էջ  
176): 4. — Եղանակ = Նարակինց, 1591  
(Արքայի Ամենամասնաւոր առողջապահութեան, 1950, էջ 70):

2. — Մարտիրոս Վ.րդ. Շենքուցի (1593

ապրել է մինչև խորին ծերութիւնը և իր  
գեղարուեստական գործունէութեան ըն-  
թացքում հայ երաժշտական արուեստի  
ջահը միշտ վառ է պահել. միաժամանակ  
նպաստել է նոր սերնդի երաժշտութեան  
կրթութեան վեհ գործին: Այդ էական յատ-  
կանիչներով էլ նա առանձնայատուկ տեղ է  
զրտում հայ երաժշտական արուեստի  
պատմութեան մէջ:

ԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՆ

(Եարունակելի՝ 13)